

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 2014Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կոտայքի մարզի բնակչության թիվը 2014թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմել է 254.6 հազար, որը կազմում է հանրապետության ողջ բնակչության 8.4%-ը, որից 138.0 հազ. քաղաքաբնակներ են (54.2%), 116.6 հազարը՝ գյուղաբնակներ (45.8%):

2014թ. առաջին եռամսյակում մարզում ծնվել է 864 մարդ կամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ 48-ով ավել, մահացածների թիվն ավելացել է 26-ով և կազմել 656 մարդ: Բնական աճը կազմել է 208 մարդ:

Գրանցված ամուսնությունների թիվը նախորդ տարվա համեմատ ավելացել է 28-ով և կազմել է 445, ամուսնալուծությունների թիվն ավելացել է 15-ով՝ կազմելով 87:

2014թ. առաջին եռամսյակում մարզում թողարկվել է 39586.6 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 37830.0 մլն. դրամի փոխարեն կամ աճը կազմել է 4.6%: Աճ է գրանցվել մշակող արդյունաբերության ոլորտում շուրջ 1301.6 մլն. դր., էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում՝ շուրջ 649.7 մլն. դր. և նվազում հանքագործական արդյունաբերության ոլորտում՝ շուրջ 208.7 մլն. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում աճ է գրանցվել խմիչքների (26.3%), դեղագործական ապրանքների (11.4%), հիմնային մետաղների (27.6%) արտադրության բնագավառներում:

2014թ. առաջին եռամսյակի ընթացքում մարզում արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը կազմել է 39488.2 մլն. դրամ նախորդ տարվա 38073.5 մլն. դրամի փոխարեն կամ աճը կազմել է 3.7 %:

Արտադրանքի իրացման ծավալների մեջ 2014թ. հաշվետու ժամանակաշրջանում իրացումը ներքին շուկայում կազմել է 33661.9 մլն. դրամ, իսկ արտահանումը՝ 5826.3 մլն. դրամ, որից ԱՊՀ երկրներ է արտահանվել 4773.4 մլն. դրամի և այլ երկրներ՝ 1052.9 մլն. դրամի արտադրանք: 2014թ. առաջին եռամսյակում արտահանման ծավալը 2013թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 27.3 %-ով:

	2013թ. I եռ.	2014թ. I եռ.	մլն. դրամ շեղում +/-	%
Թողարկված արտադրանքի ծավալը	37830.0	39586.6	1756.6	104.6
Արտադրանքի իրացման ծավալը	38073.5	39488.2	1414.7	103.7
Արտահանման ծավալը, որից՝	8009.2	5826.3	-2182.9	72.7
ԱՊՀ երկրներ	7272.9	4773.4	-2499.5	65.6
այլ երկրներ	736.3	1052.9	316.6	143.0

2014թ. առաջին եռամսյակի ընթացքում մարզում իրականացվել են 4566.9 մլն. դրամի կապիտալ ներդրումներ, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 64.4 մլն. դրամով և կազմում է հանրապետությունում իրականացված կապիտալ ներդրումների 11.4 %-ը:

Մարզում կենտրոնացված է հանրապետության խոշոր եղջերավոր անասունների շուրջ 9.1 %-ը (60.1 հազար գլուխ տավար, որից 27.9 հազարը՝ կովեր), ոչխարների և այծերի՝ գրեթե 6.6%-ը (42.9 հազար գլուխ) և խոզերի՝ 13.2 %-ը (14.9 հազար գլուխ):

Հաշվետու ժամանակաշրջանում մարզում արտադրվել է 1.5 հազ. տոննա միս նախորդ տարվա 1.8 հազ. տոննայի դիմաց (նախորդ տարվա արտադրանքի 83.3%): Արտադրվել է 14.6 հազ. տոննա կաթ (նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 11.4%) և 33.8 մլն. հատ ձու (նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 26.1%) :

Ներկայումս մարզում գործում են 4 սպառողական ապրանքների և 2 գյուղարտադրանքի շուկաներ: Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2014թ. առաջին եռամսյակի ընթացքում կազմել է 8439.9 մլն. դրամ (նախորդ տարվա համեմատ նվազել է 327.0 մլն. դրամով):

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների գումարը կազմել է 8208.5 մլն. դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 6142.4 մլն. դրամի դիմաց կամ աճը կազմել է 33.6 %:

2014թ. ապրիլի 1-ի դրությամբ մարզում գրանցված գործազուրկների թիվը կազմել է 6100 մարդ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 600-ով: